



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Գևորգյանը:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 35-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Այնուհետև առաջարկ եղավ գիտխորհրդի նիստը վարող նախագահ ընտրել բանասիրական գիտությունների դոկտոր, նորագույն շրջանի հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր Վ. Գաբրիելյանին: Վերջինս տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

Ֆակուլտետի դեկանը հանգամանալից անդրադարձավ ուսումնական գործընթացին /ուսումնական ծրագրեր, առարկայական ծրագրերի նորացում, դասավանդման մեթոդիկայի կատարելագործում, եռաստիճան ուսուցման խնդիրների հետ կապված աշխատանքների հստակեցում.../:

Նա մասնավորապես նկատեց.

- Հաշվետու ժամանակաշրջանն ընդգրկում է 2017-ի նոյեմբերից 2018-ի դեկտեմբերը:

Ֆակուլտետում կազմակերպվել են գիտական բազմաթիվ նստաշրջաններ: Ֆակուլտետը սերտ համագործակցության մեջ է ՀՀ ԳԱԱ-ի հասարակագիտական բաժանմունքի, գրականության և լեզվի ինստիտուտների, գրողների միության, Մատենադարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: Ֆակուլտետում ակտիվորեն գործել են ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը:

Այժմ ամբիոնների աշխատանքների մասին:

Հայոց լեզվի ամբիոնի գիտական հետաքրքրությունները բազմազան են, բայց շատ ուրոշակի՝ արդի հայերենի կանոնարկման հարցեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ, թարգմանչական գործ, հաղորդակցման և խոսքի մշակույթի արդիական հիմնախնդիրներ են:

Աշխատակազմ

Ամբիոնի աշխատակազմը ունի երեսուներեք անդամ, որոնցից երկուսը՝ դոկտոր, պրոֆեսոր, մեկը՝ դոկտոր, դոցենտ, քսանմեկը՝ դոցենտ, յոթը՝ ասիստենտ, մեկը՝ դասախոս:

Ամբիոնն ունի առկա ուսուցման երեք, հեռակա ուսուցման մեկ ասպիրանտ և մեկ հայցորդ:

Գիտական մաս

2017- 2018 թթ. ամբիոնը հրատարակել է՝

• ***երեք մենագրություն՝ Յակոբ Չոլաքեան՝*** «Արեւմտահայերենի քերականութիւն. կանոնակարգ եւ խնդիրներ», գիրք Ա, Երևան, «Գործնական արեւմտահայերեն», Անթիլիաս, ***Զարիկ Աղաջանյան՝*** «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում»:

● *մեկ բառարան՝ Զարիկ Աղաջանյան*՝ «Արդի հայերենի իմաստաարժեքային գուգա-
ձևությունների բառաքերականական բառարան»:

● *բուհական մեկ դասագիրք՝* պրոֆ. **Ա. Սուքիասյանի** դասագրքի լրամշակված տար-
բերակը՝ «Ժամանակակից հայոց լեզու», համահեղ.՝ Քնարիկ Սուքիասյան, Մանուկ Ֆելք-
յան:

● *ուսումնական մեկ ձեռնարկ՝* «Հայոց լեզվի ուղեցույց» (հեղ.՝ Յու. Ավետիսյան, Լ. Թել-
յան, Լ. Սարգսյան, Լ. Ավետիսյան): Հրատարակվել է Գիտության պետական կոմիտեի երկ-
ամյա թեմատիկ ծրագրի իրականացման շրջանակներում:

Ամբիոնի ներկայացրած նոր գիտական թեման այս տարի նույնպես արժանացել է ՀՀ
ԿԳՆ գիտության կոմիտեի պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման: Թեման՝ «Արդի
հայերենի բառապաշարի զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ»:

Տպագրության են երաշխավորվել երկու մենագրություն՝ «Ժամանակակից հայերենի
կետադրությունը», հեղ.՝ **Յուրի Ավետիսյան**, և «Անորոշ դերբայը ստորոգյալի կազմում»,
հեղ.՝ **Զարիկ Աղաջանյան**:

Ամբիոնի երեք դասախոսներ ստացել են դոցենտի գիտական կոչում:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են համալսարանական և հանրապետական գի-
տաժողովների, տպագրել են **հինգ տասնյակից ավելի** գիտական հոդվածներ:

2018 թվականի նոյեմբերի 29-ին ամբիոնը հայոց լեզվի պատմության ամբիոնի հետ
համատեղ կազմակերպել է «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական ամենամյա
գիտաժողովը:

Կրթական մաս

Երկրորդ տարին է՝ բակալավրատի երկրորդ կուրսում գործարկվում են ամբիոնի մշա-
կած երկու նոր դասընթացներ՝ *Տեքստի խմբագրում և ստեղծագործական մշակում*, *Գործ-
նական հաղորդակցման հմտություններ և խոսքային էթիկետ*: Դրանք ոչ միայն գրավիչ են
դարձնում ֆակուլտետի կրթական ընդհանուր ծրագիրը, այլև պայմանավորում են գործնա-
կան կարևոր արդյունքներ:

Ամբիոնը նախատեսում է բակալավրատում գործող «Թարգմանչական գործ» մասնա-
գիտացման հիմքի վրա այս ուսումնական տարում «Հայոց լեզու և թարգմանչական գործ»

մագիստրոսական ընդհանուր ծրագրից առանձնացնել «Թարգմանչական գործ» նոր ծրագիրը:

Ամբիոնն այս տարի նույնպես կարողացավ հաջողությամբ գործարկել իր հիմնական մագիստրոսական ծրագիրը. ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսում այսօր սովորում են 22 մագիստրանտներ, ըստ որում՝ երկուսը օտարերկրացիներ են՝ չինուհի և պարուկուհի:

Ամբիոնը դասախոսությունների շարք է պատրաստում իրավաբանական դաշտի համար. սկսել է ՀՀ վերաքննիչ դատարանի աշխատակիցներից. իրավաբանական գրագրության լեզվի վերաբերյալ վերաքննիչ դատարանի դատավորների և դատարանի գործավարական աշխատակազմի համար դասախոսություններ է կարդացել ամբիոնի դոցենտ Լիանա Սարգսյանը: Նախնական պայմանավորվածություն կա նաև եկող ուսումնական տարում կիսամյակային նմանատիպ մի դասընթաց կազմակերպել արդարադատության ակադեմիայում:

2018 թ. նոյեմբերի 1-ին հայ բանասիրության ֆակուլտետում հայոց լեզվի ամբիոնի նախաձեռնությամբ բացվեց պրոֆ. Աշոտ Սուքիասյանի անվան լսարան:

Ծրագրային մաս

1) Անհրաժեշտ է ավելի գրավիչ դարձնել ամբիոնի կողմից մատուցվող դասընթացների բովանդակությունը և թարմացնել մատուցման ձևերը՝ ներգրավելով տեխնիկական միջոցներ, որոնց պակասությունը, ի դեպ, ֆակուլտետում զգացվում է: Դասընթացների բովանդակությունը բակալավրատում պետք է ուղղորդել առավել գործնական նյութի ուսուցմանը, մագիստրատուրայում ներառել նպատակային նոր դասընթացներ:

2) Ստեղծել ձեռնարկ *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա* առարկայի համար, գործնական աշխատանքի ձեռնարկ բանասիրության ֆակուլտետի *Ոճագիտություն* դասընթացի համար, *Խոսքի մշակույթի* տեսագործնական ձեռնարկ Բնագիտական ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների համար:

Ամբիոնում տիրում է աշխատանքային և գործընկերային բարեխաղաղ մթնոլորտ:

Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնը 2017-2018 ուստարում շարունակել է իր գիտական գործունեությունը թե՛ հայ հին և միջնադարյան, թե՛ հայ նոր գրականության ուղղություններով:

Ամբիոնը 11 հաստիք ունի, որոնցից միայն երեքն են ամբողջական, առկա 2 ասպիրանտ, արտասահմանյան 1 ու հեռակա 1 ասպիրանտ և 4 հայցորդ:

Ամբիոնն էլ մյուսների նման անբարենպաստ պայմանների հետևանքով ենթարկվել է աղետի և դեռ գտնվում է անցողիկ նեղությունների փուլում: Բայց հուսադրում են, թե այժմյան դժվարություններն իբր կախված են ուսանողների թվի ու դրա հետևանքով՝ նաև դասաժամերի կրճատումից: Դասաժամերի կրճատման պատճառներից մեկն այն է, որ մագիստրատուրայում թե՛ առկա և թե՛ հեռակա ուսուցմամբ առանձին ամբողջական խմբեր վերջին տարիներին չեն ձևավորվում: Այս ամենի հետևանքով կրճատվել են հայ գրականության ամբիոնների դասաժամերը, և ամբիոնը ստիպված է եղել ներքին համաձայնությամբ ոմանց փոխադրել 0,75, ոմանց էլ՝ 0, 5 դրույքի:

Այսպիսով՝ ամբիոնն այսօր ունի 3 ամբողջական հաստիք, որ զբաղեցնում են ուսումնական գործընթացի հիմնական ծանրությունը կրող պրոֆեսորներ Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը և Ալ. Մակարյանը, մանավանդ որ նրանք իրականացնում են նաև ջանք ու ժամանակ խլող ծավալուն հասարակական չվճարվող աշխատանքներ: Մեկը ԵՊՀ 100-ամյակի առթիվ լույս տեսնող «Կենսագրական հանրագիտարանով» և «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամով ու նրա «Բարեգործ» պաշտոնաթերթով է զբաղված, ԲՈԿ-ի՝ համալսարանում գործող աստիճանաշնորհող մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է, մեկը ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահն է, մյուսը՝ ինչպես գիտեք՝ միաժամանակ և՛ ֆակուլտետի, և՛ ԲՈԿ-ի աստիճանաշնորհող խորհրդի գիտական քարտուղարն է՝ պաշտոնական փաստաթղթերով գերծանրաբեռնված:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, ազգագրության ինստիտուտի, մյուս բուհերի, Արցախի պետական համալսարանի կողմից ամբիոնը հաճախ է ճանաչվում որպես արտաքին գրախոսող կազմակերպություն:

Պրոֆ. Ս. Մուրադյանը գրեթե ավարտին է մոտեցնում «Հայ նոր գրականության պատմության» բուհական դասագրքի 1-ին հատորի աշխատանքները: Նա զուգահեռաբար զբաղ-

վում է նաև Հ. Շիրազի անտիպ ժառանգության ուսումնասիրության ու հրատարակման գործով: Գյումրիում՝ քանաստեղծի հուշատուն-թանգարանում արդեն կայացել են երկու գրքի շնորհանդեսներ. 2017 թ. հոկտեմբերի 1-ին՝ «Հուշարձան հայրիկիս» գրքի, իսկ 2018 թ. սեպտեմբերի 30-ին՝ «Անտիպ էջեր» գրքի Ա հատորի (նախաստեպած է 4 հատոր): Երկու գրքերն էլ պահպանված շուրջ 3 000 ձեռագրերից ընտրել, կազմել, ծանոթագրել և ընդարձակ ուսումնասիրություն - առաջաբաններով հրատարակել է Ս. Մուրադյանը: Գրեթե պատրաստ է «Անտիպների» երկրորդ հատորը, որը լույս կտեսնի առաջիկա ամիսներին: Լույս են տեսել նաև 2 հոդված և երեք գիրք՝ նրա առաջաբաններով:

Պրոֆ. Վ. Սաֆարյանը, որ հին ու միջնադարյան, նոր ու նորագույն գրականություններից իր նախասիրություններն ունեցող ինքնատիպ գրականագետ է, առանձին գրքով հրատարակել է վերջին տարիների իր գիտական լայն հետաքրքրությունները բնութագրող հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն՝ «Գրականության պատմության դրվագներ» խորագրով:

Բավական արդյունավետ է աշխատել նաև պրոֆ. Ալ. Մակարյանը. դրա խոսուն վկայությունն են ոչ միայն «Կրկին Պարոնյանի հետ (Նոր ընթերցումներ)» խորագրով մենագրությունը, այլև ամսագրային 6 ծավալուն հոդվածներն ու 43 էջ կազմող մի ընդարձակ վերջաբան-ուսումնասիրություն Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզները» գրքում: Այս ամենին հավելվում է նաև հայ-ֆրանսիական գրական կապերին նվիրված մի ուշագրավ զեկուցում, որը նա կարդացել է Ֆրանկոֆոնիայի համաժողովին. այն առանձին ժողովածուում լույս կտեսնի մինչև տարեվերջ:

Դոց. Ռ. Էլոյանը «Արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» մենագրության 1-ին հատորը տպագրելուց հետո հրատարակության է պատրաստում երկրորդ գիրքը: Արտասահմանյան պարբերականում հրատարակել է 1 հոդված:

Ուրախալի է երիտասարդ դոցենտ Հ. Համբարձումյանի ««Սասնա ծռեր». պատում, մոտիվ, գրքային ավանդույթ» իրոք պատկառելի մենագրության տպագրությունը: Սրան գումարվում են 3 հոդվածներ՝ տպված մեկը ռուսական հանդեսում՝ անգլերենով, մեկը՝ ժողովածուում, մեկը՝ հանդեսում, 4 զեկուցում հանրապետական և միջազգային գիտաժողովներում՝ անգլերենով, 2 հրապարակային բանախոսություն ԱՄՆ-ում:

Դոց. Ն. Վարդանյանը անցնող տարում 4 հոդված է հրատարակել հանդեսներում ու ժողովածուներում, 1 գրքի նախաբան, 2 թեզիս, 6 զեկուցում հանրապետական և անգլերենով 2 զեկուցում միջազգային գիտաժողովներում:

Բ. գ. դ., դոց. Ս. Մխիթարյանը ամսագրային 5 հոդվածի հեղինակ է:

Ամսագրային հոդվածներ են հրատարակել նաև դոց., դոց. Վաչիկ Ավագյանը, Սերժ Սրապիոնյանը, Վարդան Եղիազարյանը և Արշալույս Գալստյանը:

Հաշվետու ժամանակում ԵՊՀ Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում մանկավարժական գործունեությանը զուգահեռ հրատարակվել են հետևյալ աշխատանքները՝

6 գիրք, 39 հոդված, 5 գրքի առաջաբան ու վերջաբան, 2 թեզիս:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

2017-18 ուստարում հայոց լեզվի պատմության ամբիոնը կազմակերպել է գիտաժողովներ և մի շարք միջոցառումներ: Դրանք են՝

1. 2017 ամռանը ամբիոնը ՀՀ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ կազմակերպել է «Երիտասարդ գիտնականների դպրոց» հանրապետական գիտաժողով՝ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով, որի նպատակն էր հանրապետության երիտասարդ գիտնականներին, հետազոտողներին աջակցելը գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հարցում:

2. 2017 թ. նոյեմբերին հայոց լեզվի պատմության ամբիոնը և հայոց լեզվի ամբիոնի հետ կազմակերպել է «Աբեղյանական ընթերցումներ» հանրապետական 2-րդ գիտաժողովը, որտեղ իրենց զեկուցումներով հանդես են 22 հայագետներ ինչպես ԵՊՀ-ից, այնպես էլ ՀՀ այլ բուհերից: Հոդվածների ժողովածուն տպագրվել է ԵՊՀ հրատարակչության կողմից:

3. 2017 թ. հունիսին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած Ջահուկյանական միջազգային գիտաժողովին զեկուցումներով հանդես են եկել Ա. Աբաջյանը, Ս. Գրիգորյանը, Ն. Պարոնյանը, Ն. Դիլբարյանը, Ա. Խաչատրյանը:

4. Ն.Դիլբարյանը և Ա.Խաչատրյանը 2018 թ., մայիսին զեկուցումներով հանդես են եկել Համազգային հայ կրթական և մշակութային միության, ԵՊՀ-ի և ՀՀ ԳԱԱ –ի կազմակերպած «Կրթամշակութային կյանքը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին» խորագրով գիտաժողովում, իսկ օրեր առաջ՝ նոյեմբերի 10-11-ին, Մոսկվայում <<Հայոց մշակույթի ոսկե դարը>> միջազգային գիտաժողովին նույն հեղինակները կարդացել են զեկուցումներ, որոնց թեզիսներն արդեն տպվել են:

5. Ամբիոնի և ֆակուլտետի ՈՒԳԸ-ի եռանդուն ջանքերով ստեղծվել է բարբառագիտական ուսումնասիրությունների կենտրոն, որի գործունեության ծրագիրը հաստատվել և ֆինանսավորվել է ԵՊՀ ղեկավարության կողմից: Ս/թ հոկտեմբերին կազմակերպվել է գրավոր մրցույթ-ընտրություն, որի արդյունքում բարձր միավորներ հավաքած 20 ուսանողներ այժմ մասնակցում են բարբառագիտական արշավներին /արդեն եղել է 2 ուղևորություն Գյումրու և Վանաձոր/: Ծրագիրը ղեկավարում են հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Աբաջյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

6. 2018թ. հոկտեմբերի 8-ին կայացավ պրոֆեսոր Մանվել Ասատրյանի անվան լսարանի բացումը, որի վերանորոգումը և մասնակի կահավորումը կազմակերպել և ֆինանսավորել էր ամբիոնի վարիչ Ա. Աբաջյանը:

7. Ամբիոնը 2017-ի ղեկտեմբերին կազմակերպել է գրաբարի օլիմպիադա, որին մասնակցել են տարբեր ֆակուլտետների ուսանողներ, լավագույններին պարգևատրել զրքերով:

8. Ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է ՈւԳԸ զեկուցումներ, վարել նիստեր, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային:

9. Մայրենիի օրվան նվիրված միջոցառումների շարքում ամբիոնի աշխատակիցներ Ս. Գրիգորյանը՝ Սևանի Վազգենյան հոգևոր ճեմարանում, իսկ Ն. Պարոնյանը Գևորգյան հոգևոր ճեմարանում հանդես են եկել զեկուցումներով:

10. Ուսումնակրթական գործընթացին զուգահեռ՝ ամբիոնի դասախոսները գիտահետազոտական ակտիվ գործունեություն են ծավալել 2017-2018 ուստարում՝ հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակելով գիտական 28 հոդված, որոնցից 3-ը՝ ՌԴ-ի հանրագիտարանում:

11. Գիտության պետական կոմիտեի պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման է արժանացել <<Գրաբարյան դարձվածքների ձևախմաստային և կառուցվածքային քննություն>> գիտական թեման /ղեկավար՝ Ա. Աբաջյան, անդամներ՝ Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան և Ք. Հարությունյան /հայցորդ//, որի իրականացման աշխատանքներին հեղինակներն արդեն ակտիվորեն ձեռնամուխ են եղել:

Հաշվետու շրջանում **ընդհանուր լեզվաբանության ամբիոնի** պրոֆեսորադասախոսական կազմը դասավանդումը զուգակցել է ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքի հետ: Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել լեզվաբանության տեսության, կառուցվածքային լեզվաբանության, համակարգչային լեզվաբանության, լեզվաբանական նշանագիտության, հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության, հ.-ե. լեզուների համեմատական քերականության, դասական լեզուների դասավանդման հետ կապված բազմաթիվ հիմնահարցեր:

Նախորդ տարվա ընթացքում ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասախոսները գիտական տարբեր հանդեսներում և գիտաժողովների զեկուցումների ժողովածուներում հրատարակել են **8** (ութ) հոդված, որից՝ Վ. Պետրոսյան՝ 4, Լ. Հովսեփյան՝ 2, Ա. Աբրահամյան՝ 1, Ս. Ավետյան՝ 1, Ա. Հայրապետյան՝ 2, Է. Ասատրյան 1:

Ամբիոնն ունի 1 ասպիրանտ և 1 հայցորդ:

Ամբիոնի դասախոսները տարբեր դասընթացներ են վարել (լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, հ.-ե. լեզուների համեմատական քերականություն, լատիներեն, հին հունարեն, լեզվաբանական տիպաբանություն, իմաստաբանական արդի ուսմունքներ և այլն) ԵՊՀ 5 ֆակուլտետների (հայբանասիրության, ռ/գ բանասիրության, աստվածաբանության) և 1 կենտրոնի (ֆարմացիայի ինստիտուտ) բակալավրիատում և մագիստրատուրայում: Ինչպես երևում է տպագրված աշխատանքների ցանկից, ամբիոնի դասախոսների մի մասը, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, արդյունավետ կերպով զբաղվում է նաև գիտությամբ:

Ներկայումս ընդհանուր լեզվաբանության ամբիոնը ունի 4 հիմնական և 1 համատեղությամբ դասախոսական կազմ՝ 3,5 ոչ լիարժեք հաստիքով, որի պատճառով ամբիոնիս նկատմամբ կիրառվել է աշխատավարձերի վճարման 0,95 գործակիցը:

Չնայած փոքրաթիվ կազմին՝ այսօր էլ ընդհանուր լեզվաբանության ամբիոնը շարունակում է ապրել լիարժեք գիտական կյանքով:

Հայ նորագույն գրականության ամբիոնի աշխատակիցները ուսումնական գործընթացին զուգահեռ շարունակել են նաև գիտահետազոտական աշխատանքները, հրատարակել հոդվածներ, մասնակցել արտասահմանում կազմակերպված գիտաժողովների և միջոցառումների, ակնարկային դասախոսություններ կարդացել Երևանի և տարբեր մարզերի դպրոցներում, ունեցել հեռուստաելույթներ:

Տպագրվել է «Չարենցյան ընթերցումներ-10» ժողովածուն, որի մեջ հոդվածներ ունեն ամբիոնի անդամներ Վ. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը:

Լույս են տեսել պրոֆ. Վ. Գաբրիելյանի «Դիտարկումներ գրականության ճանապարհին» հոդվածների ժողովածուն և պրոֆ. Ա. Ավագյանի «Վահան Թեքեյան. Ազնվական քերթողը» ձեռնարկը:

Ասիստենտ Սևակ Ղազարյանը վերահրատարակել է Պարույր Սևակի «Ամանեջ» վեպը:

Ամբիոնի դոցենտ Ս. Գրիգորյանը պարզևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով: Նա տպագրության է հանձնել «Պարույր Սևակը և համաշխարհային պոեզիան» մենագրությունը:

Ամբիոնի անդամներից Մ. Ղազարյանը ապրիլի 20-21-ին ԱՄՆ Միչիգանի համալսարանի հրավերով մասնակցել է «Մանկության և պատանեկության խնդիրները հայագիտության ոլորտում» միջազգային սեմինարին, հանդես եկել «Դեռահասների սեռական կյանքի հոգեբանական նրբերանգները Հակոբ Օշականի փոքր արձակում» զեկուցմամբ:

Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում 2017-2018 թթ. հաշվետու ժամանակաշրջանում թարմացվել և արդիականացվել են մագիստրոսական դասընթացների ծրագրերը՝ հարմարեցնելով ժամանակակից գրականագիտության պահանջներին: Ամբիոնի դասախոսները, ուսումնամանկավարժական աշխատանքից բացի, իրենց ակտիվ մասնակցությունն են բերում հանրապետության գիտական կյանքին: Հաշվետու ժամանակաշրջանում նրանք տպագրել են տասնհինգից ավելի գիտական հոդվածներ, ընդ որում՝ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանում և Կանադայում (Տորոնտո): Լույս է

տեսել Ժ. Քալանթարյանի «Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն» ուսումնական մեծածավալ ձեռնարկը, որն ամփոփում է քննադատության տեսության և մեթոդաբանության կարևորագույն հարցադրումներ: Տպագրվել է Ա. Ջրբաշյանի կողմից հայերեն թարգմանված՝ ժամանակակից ռուս գրականագետ Օլգա Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» ուսումնական ձեռնարկը պրոֆ. Ժ. Քալանթարյանի խմբագրությամբ:

Ամբիոնի անդամները մշտապես մասնակցում են հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներին: Նրանցից 3-ը զեկուցումներով հանդես են եկել «Չարենցյան ընթերցումների» հերթական տասներորդ գիտաժողովին, Ա. Բեքմեզյանը՝ «Ավետիս Ահարոնյան» գիտաժողովին: Պրոֆ. Մ. Ջանփոլադյանը մասնակցել և զեկուցումներ է կարդացել «Բրյուսովյան ընթերցումներ», «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» միջազգային գիտաժողովներում, նաև հեռակա մասնակցություն է ունեցել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի միջազգային գիտաժողովին, որի նյութերը տպագրվել են Մոսկվայում: 2017թ. պրոֆ. Ժ. Քալանթարյանը պարգևատրվել է Ֆրիտյոֆ Նանսենի մեդալով:

Ամբիոնի դասախոսները շարունակաբար ղեկավարում են ասպիրանտներ և հայցորդներ: 2017 թ. ղեկտեմբերին տեղի ունեցավ ամբիոնի առկա ասպիրանտ Դիանա Մնացականյանի ատենախոսության հրապարակային պաշտպանությունը: Իբրև առանձին մենագրություն՝ ատենախոսությունը ամբիոնի կողմից երաշխավորվել է տպագրության:

Ամբիոնի աշխատանքը բարձր է գնահատվում նաև ուսանողների կողմից՝ մշտապես արտացոլվելով սոցիալական տարեկան բարձր արդյունքներում:

Ելույթ ունեցող ամբիոնի վարիչներն ու գիտխորհրդի մյուս անդամները /Ս. Մուրադյան, Ա. Աբաջյան, Է. Մինասյան, Ա. Տեր-Մինասյան, Հովհ. Հովակիմյան.../ բարձր գնահատեցին հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքն ու իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործընթացի կատարելագործման համար:

Նիստն ամփոփեց համալսարանի պրոռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գեղամ Գևորգյանը: Նա հիմնականում գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց դեկանին՝ պրոֆ. Ա. Ավագյանին: Համալսարանի պրոռեկտորը, սակայն, ընդգծեց, որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով հասնել նոր նվաճումների, վերացնել առկա որոշ թերացումները: Իսկ ինչ վերաբերում է դեկանի ու ելույթ ունեցողների մատնանշած՝ ֆակուլտետում առկա դժվարություններին, ցավոտ խնդիրներին, մասնավորապես ուսանողների՝ դասերից հաճախակի բացակայությանը կամ ԵՊՀ-ի տարբեր ֆակուլտետների ուսումնական ծրագրերից «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների զանց առնմանը կամ ժամաքանակի խիստ կրճատմանը, պրոռեկտորը նախ՝ նկատեց, որ եթե դասախոսությունները մատուցվեն բարձր որակով, ապա ուսանողները սիրով կհաճախեն դասերին, ինչպես արդեն նկատեց գիտխորհրդի անդամ ուսանողներից մեկը՝ Հովհաննես Հովակիմյանը, և հետո՝ «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների մյուս ֆակուլտետներից հանումը կամ էլ ժամաքանակի կրճատումը չպետք է ընդունել այդքան ցավազին, մանավանդ որ մարդիկ տարիների ընթացքում այսպես թե այնպես յուրացնում են մայրենին: Ակադ. Գ. Գևորգյանի հայտնած վերջին կարծիքը գիտխորհրդի անդամներն ընդունեցին խիստ վրդովմունքով: Հատկապես երկու լեզվաբաններ (դոց., դոց. Աշոտ Հայրապետյան և Աշոտ Տեր-Մինասյան) իրենց ելույթներում զարմանք ու զայրույթ արտահայտեցին հնչած կարծիքի վերաբերյալ՝ այն անվանելով միանգամայն սխալ և խիստ քամահրելի վերաբերմունք հայ ժողովրդի գոյության խորհուրդն ապահովող հիմնական երկու գործոնների՝ լեզվի և գրականության նկատմամբ:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ՝

Լ Ս Ե Ց Ի Ն - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Գրեստա Արսենի Գասպարյանի** ատեստավորման հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Մաֆարյանը և Ալ. Մակարյանը:

Նշվեց, որ Գրետա Գասպարյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը Արևելքի և Արևմուտքի գրական զուգահեռներում»: Գիտական ղեկավարն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մամվել Մուրադյանը:

2017 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում նա զբաղվել է թեմային առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է Ավետիք Իսահակյանի բնագրերը, խմբավորել է ստեղծագործությունները՝ ըստ Արևելքի և Արևմուտքի տարբեր երկրների գրական-մշակութային դաշտերի հետ ունեցած առնչությունների: Կարդացել է տեսական և փիլիսոփայական գրքեր Արևելքի և Արևմուտքի՝ իբրև երկու առանձին քաղաքակրթությունների, տարբերությունների մասին:

2018 թվականի մայիս-հունիս ամիսներին հանձնել է որակավորման քննություններ «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Գիտության փիլիսոփայություն», «Մանկավարժություն» առարկաներից:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ատեստավորել **Գրետա Արսենի Գասպարյանին**:

Վերջում նախագահողը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին, ելույթ ունեցողներին, և գիտական խորհրդի նիստը համարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ